**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 2**

**ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-2020/6 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻ ԳՆԱՀԱՏՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԻՍՏԻ**

ք. Երևան «13» դեկտեմբերի 2019թ.

2019թ-ի դեկտեմբերի 11-13-ին, ՀՀ, ք. Երևան, Փ. Բյուզանդի փ. 1/3 հասցեում գտնվող «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի գրասենյակում տեղի ունեցավ ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-2020/6 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) նիստը: Հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի հետևյալ անդամները՝

| | |
|---|---|
| Ա. Ասատրյան | «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի տեխնիկական բաժնի պատասխանատու (հանձնաժողովի նախագահ). |
| Ա. Ալեքյան | «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի ավագ տեխնիկական մասնագետ. |
| Ա. Կարապետյան | «Փարկինգ Սիթի Սերվիս» ՓԲԸ-ի տրանսպորտային միջոցների շահագործման պատասխանատու. |
| Հ. Գուլաբյան | «ՓՐՈՄՈՈՒՇՆ» ՍՊԸ ներկայացուցիչ (հանձնաժողովի քարտուղար): |

Հաշվի առնելով, որ հանձնաժողովի նիստին մասնակցում էին հանձնաժողովի բոլոր անդամները, հետևաբար՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 26-րդ կետի 2-րդ ենթակետի համաձայն, հանձնաժողովի նիստը համարվեց իրավազոր և հայտարարվեց բացված:

Հանձնաժողովի նիստը նախագահում էր Ա. Ասատրյանը, իսկ քարտուղարն էր՝ Հ. Գուլաբյանը:

**ՕՐԱԿԱՐԳ**

1. ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-2020/6 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտերի վերաբերյալ:
2. Ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին:

**1. ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-2020/6 ԾԱԾԿԱԳՐՈՎ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ՀԱՅՏԵՐԻ ՄԱՍԻՆ**

Հանձնաժողովի նախագահ Ա. Ասատրյանը նիստը հայտարարեց բացված և տեղեկացրեց, որ գնման գործընթացն իրականացվում է ՀՀ «Գնումների մասին» օրենքի 15-

րդ հոդվածի 6-րդ մասի համաձայն, հրապարակելով գնման հայտով սահմանված՝ տվյալ ընթացակարգի շրջանակում գնվելիք գնվելիք գնման առարկաների գները:

| Չ/Հ | Գնման առարկայի անվանումը | Գնման հայտով սահմանված ընդհանուր գինը |
|---|---|---|
| 1. | բենզին, ռեգուլյար | 1127500 |
| 2. | դիզելային վառելիք, ամառային | 1260000 |

ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-2020/6 ծածկագրով գնման ընթացակարգի հայտերը բացվել են ՀՀ, ք. Երևան, Փ. Բյուզանդի փ. 1/3 շենք հասցեում, հրավերով սահմանված օրը և ժամին՝ 2019 թվականի դեկտեմբերի 11-ին, ժամը «11:15»-ին:

Հրավերում փոփոխություններ չեն կատարվել, այլ հարցումներ և հիմնավորումներ չեն ներկայացվել:

ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-2020/6 ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու հայտեր են ներկայացրել հետևյալ անձինք /այսուհետ՝ նաև մասնակիցները/.

| Հ/Հ | Մասնակցի անվանում | Հասցեներ | Էլ. փոստ |
|---|---|---|---|
| 1 | «ՖԼԵՇ» ՍՊԸ | ք.Երևան, Ե.Կողբացու 30 | flashltdtender@gmail.com |

Հանձնաժողովն արձանագրեց, որ՝

- Հայտ/եր/ը կազմվել և ներկայացվել են ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-2020/6 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ՝ ընթացակարգ/ հրավերի /այսուհետ՝ հրավեր/ պահանջներին համապատասխան,
- Ներկայացված հայտ/եր/ում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը,
- Ներկայացված հայտ/եր/ում ներառված փաստաթղթերը համապատասխանում են հրավերով սահմանված վավերապայմաններին,

Հանձնաժողովի նախագահը հայտարարեց հայտ/եր/ ներկայացրած մասնակիցների գնային առաջարկները՝ հիմք ընդունելով տառերով գրվածը.

Ներկայացված գնային առաջարկների և մասնակիցների ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած լինելու վերաբերյալ տեղեկատվությունը ներառված է ստորև ներկայացված աղյուսակում (այսուհետ՝ Աղյուսակ):

| Չ/հ | Մասնակցի | | | Մասնակիցների առաջարկած գները՝ | |
|---|---|---|---|---|---|
| | Զբաղեցրած տեղ | Ընտրված մասնակցի դեպքում նշվում է «X» | Անվանում | Արժեք | Ընդհանուր գին |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 1* | - | - | «ՖԼԵՇ» ՍՊԸ | 973958.3 | 1168750 |
| 2* | - | - | «ՖԼԵՇ» ՍՊԸ | 1112500 | 1335000 |

*Վարվել են բանակցություններ, արդյունքները ներկայացվում են ստորև.

Որոշվեց՝

1. Հանձնաժողովի նախագահի կողմից ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.

2. Ներկայացված հայտ/եր/ը գնահատել բավարար:

3. Նիստը կասեցնել գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման նպատակով:

4. Քարտուղարին՝ ծանուցել բավարար գնահատված հայտեր ներկայացրած մասնակիցներին գների նվազեցման շուրջ բանակցությունների վարման մասին:

Կողմ՝ 3

Դեմ՝ 0

Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 04-ի N 526-Ն որոշման 1-ին կետով հաստատված կարգի 40-րդ կետի 5-րդ ենթակետի համաձայն՝ (գնումն իրականացվում է օրենքի 15-րդ հոդվածի 6-րդ մասի հիման վրա /բանակցություններ)՝ մասնակիցների հետ վարվեցին միաժամանակյա բանակցություններ՝ առաջարկված գների նվազեցման նպատակով:

Բանակցությունների համար սահմանվեց ժամկետ՝ 15 րոպե տևողությամբ:

Բանակցությունների վերջնաժամկետին մասնակցի կողմից ներկայացված գները մնացին անփոփոխ, որոնք գերազանցում են տվյալ ապրանքի համար գնման հայտով սահմանված գները:

## 2. ԸՆԹԱՑԱԿԱՐԳԸ ՉԿԱՅԱՑԱԾ ՀԱՅՏԱՐԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ:

Որոշվեց՝

1. Ներկայացված տեղեկատվությունն ընդունել ի գիտություն.

2. Ընթացակարգը հայտարարել չկայացած և հաստատել «ՓՍՍ-ԳՀԱՊՁԲ-2020/6 ծածկագրով գնման ընթացակարգը չկայացած հայտարարելու մասին» հայտարարության տեքստը՝ համաձայն հավելվածի:

Կողմ՝ 3

Դեմ՝ 0

Հանձնաժողովի նախագահ՝

Ա. Ասատրյան ________________

Հանձնաժողովի անդամներ՝

Ա. Ալեքյան ________________

Ա.Կարապետյան ________________

Հանձնաժողովի քարտուղար՝

Հ. Գուլաբյան ________________